

ի ծեռն Գործակատար Աստուածատուր		
Գահանայի թէլալի	43	35
» Գործակատար Մովսէս Քահանայի Շուլաւերայ	46	40
» Գործակատար Սարգիս Քահանայի Սղնափի	93	94
» Գործակատար Յովհաննէս Քահանայի Լոռույ	42	50
» Հոդեւոր Կառավարութեան Գանձակայ	257	67
Արցին. Վիճ. ի ծեռն, Սարգիս Արքեպիսկոպոսի Զալալեանց Առաջնորդի Ղարապաղու ի համայն վիճակէն	288	10
Աստ. Վիճ. ի ծեռն Գէորգ Արքեպիսկոպոսի Վեհապետեանց, Առաջնորդի Աստրախանայ, ի համայն վիճակէն	4550	
Ճամբ. Վիճ. ի ծեռն Անդրէաս Արքեպիսկոպոսի Առաջնորդի Շամախույ ի համայն վիճակէն.	403	
Գումար մտից	5750	90

Ե Լ Ք .

Ա. Կ.

Գին գնեալ մատենից վասն Ժողովարարութեանց		
Ցանծնեցաւ 150 - ն Մարտի 1872 ամի Առաջնորդին Պարսկաստանի Գրիգորիս Եպիսկոպոսի վասն բաժանեցի ի միասին ընդ Հոգաբարձուաց Արկեղն աղքատաց ի վերայ կարօտելոց Սպահանու 700 րուբի, եւ թէհրանու 300 ր, որ ի միասին առնէ	40	80

Առաքեցաւ ի 28 - ն Ապրիլի նոյն ամի առ Հոգաբարձուս Արկեղն աղքատաց ի ծեռն Առաջնորդին, 467 հատ բօլիմբերիալ եւ 47 հատ Օսմ. լիրա	4455	65
Առաքեցաւ ի 20 - ն Դեկտեմբերի նոյն ամի առ Հոգաբարձուս Արկեղն աղքատաց ի ծեռն Առաջնորդին 460 թօլ իմբերիալ	4007	40

Առաքեցաւ ի 24 - ն Ֆեւրիվարի այսր ամի առ յիշեալ Հոգաբարձուս ի ծեռն Առաջնորդի 88 հատ թօլ իմբերեալ	534	70
Գումար ելից	5728	25

Նաևօրուրիւն. — Առաքեալ ուկեաց թօշաի ծախքերը հաշուեալ են ցուցեալ գումարաց մէջ:

## Բ-Հ-Ն-Դ-Ա-Հ-Ն-Ռ-Ե-

Ա. Կ.

Գումար մտից	3750	90
Գումար ելից	5728	25

Մնայի գանձարանն Ա. Թողուոյ:

2. 65

«Արարատ» այս հաշուեցուցակն հրատարակելով, յորդոր կկարդայ այն ամենայն անձանց որք տակաւին իւրեանց հաւաքած փողերն չեն հասուցած ի Սինօդ, բարեհամին ժամ յառաջ ուղարկել, որպէս զի եւ սա կարողանայ այն դրամները եւս հասուցանել առ Հոգաբարձուս Արկեղն աղքատաց ի Սպահան, եւ փակել վերջնական կերպով սոյն ժողովարարութեան հաշիւներն:

## ՆՈՐԸՆՏԻՐ Ա. Ն. Դ. Ա. Մ. Ք.

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԳՈՒԱՅ.

**Եմսոյս 16 - ին Պ. Եւագ Գրիգորեանց Բազուէն Հետեւեալ տեղեկութիւնը ուղղած է Խմբագրութեանս:**

«Մարդասիրական Ընկերութեան խորհրդոյ Նախագահի եւ Անդամոց Ցունվարի 23 - ին եղած ընտրութիւնը հաստատավէս չելաւ։ Խորհրդան կազմուեցաւ, որ լինի Փետրվարի 11 - ին։ Այդ օրը հաւաքվել էին թէ հիմնաւոր թէ անփոփոխ եւ թէ տարեկան Անդամներից ընդ ամենը 45 հոգի, որոնք հաշուատեսութիւն արին եւ շնորհակալ ելան թէ Նախագահից եւ թէ Խորհ. անդամներից, որոնք երեք տարուայ ընթացրում աշխատել են այդ գործի մէջ Ընկերութեան համար կառուցանելով հոյակապ ուսումնարանները տղայոց եւ օրիորդաց, տպարանը եւ մատենադարանը եւ հետեւապէս Անդամներ շատացնելու մասին։

Հաշուատեսութիւնից յետոյ նառակասութիւն արին նոյն Ընկերութեան Ատենադպիր Սէրգէ Վարշամբերնցը եւ Ցովիաննէս Միրզարէզեանցը։

Ցեսոյ սկսաւ ընտրութիւնը։ Ընտրուեցաւ Նախագահ Խորհրդոյ Գերազնիւ Պաւել Շամբիլիս Մելիք Բէդրեանց (որ եւ է նախագահ Բէզարկան կոմիսիի), Անդամը Ն. Կրասիմինիկեանց. Գ. Թումայեանց. Յ. Ապրէսեանց. Թ. Քանանեանց. Ա. Վարշամեանց. Գ. Գիլտարեանց. Գ. Այվազեանց եւ Ա. Շատրեանց։

Ցանկանում ենք եւ սրանց համար առողջ եւ յաջակ կենք, եւ յուսով ենք, որ յառաջ կտանեն Ընկըրութեան գործերը դէպի աւելի լաւութիւն :

ՔԱՆՉՈՒԹԻՒՆ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ ՀՈԴԵԱՐ ՈԽՍՈՒՄ-  
ՆՈՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԿԱԺԱՎԱՐՈՒԹԵԱՆ :  
- ախու զբու զնուն ան առ առ առ առ  
• իսկ որք մեզանչն, առաջի առնեցուն  
յանփառան, զի եւ աղքն երկիցն :  
(Տիմ. Ա. 91. Ե. 5. 20.)

Թէ մարդ թէ հասարակութիւն, թէ ամրող ազգ, միայն այն ժամանակ կարող է յառաջադիմութիւն աւնենալ բարոյական, մասւորական և նիւթական զարգացման կողմից, երբ կգտնէ մի այնպիսի ճանապարհ, որը տանում լինի ուղղակի դէպ ի նոյն նպատակը: Մեր Ազգը արդէն գտիլ է այդ ճանապարհը: Մենք արդէն համուշուած ենք որ մեր սուրբ Խեղիցոյ հաստատութեան համար, մեր ազգութեան յարատեռութեան համար, մեր լիզուի և մատնադրութեան մշակման և ծաղկման համար, մեր բարոյականութեան պահպանողութեան համար, մեր նիւթաւոր բարեկեցութեան համար, մեր մտաւոր զարգացման համար, մեր մասնաւոր բարօրութեան և երջանկութեան համար, հարկաւոր է մեզ ուսումն:

Ուսում, ուսում, մեզ պիտոյ է,

Ուսումն է մեր թագաւոր.

Ուսմայ միայն կարելի է

Երջանկանալ փառաւոր:

Ասում է բանաստեղծը. և բանաստեղծները միշտ արձագանք են ժողովովի ոգոյ և ժամանակի պահանջման:

Եւ մենք ոչ միայն բաւականանումենք լոկ համոզնենք, աղ սկսումենք իրագործել, մարմնացնել այդ համոզմունքը, որս ապացոյց են բազմաթիւ ազգայն գոլոցները: . . .

Աչա լսումեմ շատ ձայներ, որք բարձր աղաղակումեն՝ մի խարէք մեզ և ձեզ. մեր բոլոր ուսումնարանները և բարոցները, բացի յոյժ սակաւ բացառութիւններից, գոտանումն թշուառ վիճակի մէջ, աններելի անկարգութեան և անյառաջադիմութեան մէջ: Մենք համաձայնվում ենք և արդարեւ անցաւ այն ժամանակը, երբ

թթու ազգասիրութեամբ մոլուած, կամ լաւ աւսել անձնական փառատիրութեամբ յափշտակուած, մենք չէնք կամենում իսպատովանել մեր պահասութիւնները: Մեր գարը գործի փաստի, ապացուցի գար է:

Բայց ով է յանցաւորը որ մեր ազգային ուսումնարանները և դպրոցները գտանւումեն այդպիսի անգոհացուցիչ զրութեան մէջ . . .

Ո՞հ, հարիւրաւոր, հազարաւոր բերաններ բացուեցան իսկոյն և խօսք ընդմիջումեն աղաղակեւլով: « Հոգեւորականներն են յանցաւոր, որովհետեւ նոյա իշխանութեան ներքոյ են և նոյա ձեռքով կառավարում մեր գոլոցները: , ,

Ներեցէք, մենք չենք համաձայնուում:

Ուրեմն եկէք քննենք թէ արդեօք Ճշմարիտ է և չիմնաւոր այդ կարծիքը, որը հանրեա թէ ընդհանրացել է ժողովրդի մէջ:

Մի փոքր ազգ ցրուած բոյզը տիեզերքի վերայ անտէր, անփող, անզօր, անուսումն, յանձնել է իւր կեանքի ղեկը իւր հաւատարիմ ծառային, իւր արթուն հովաւին, իւր բազմադարեան մուրիմ և ցաւակից բարեկամին — իւր հոգեւորականութեան բայց սա՝ տղիտութեան և աղքատութեան մէջ ընկրմած լինելով ամրող ազգի հետ միասին կարող էր արդեօք գոհացուցիչ կերպով կատարել իւրայ բարգած ծանր և միանգամայն սրբազն պարտաւորութիւնները: Նոյն իսկ այժմ ունի նա միջոց և հնարք առ այն ժողովուրդը ճանաշել է և որոշել է արդեօք թէ ի՞նչ փոխադարձ յարաբերութիւններ և պարտաւորութիւններ կան իւր և իւր հոգեւորականութեան մէջ: . . .

Ընդհանուր պատմութիւնը բազմաթիւ օրինակներով ցուցանում է մեզ, որ իւրաքանչիւր աղաղական կեանքի սկզբում մտաւոր զարդացումն սկսումէ նախ հոգեւորականութեան մէջ: Արդէն ըստ իւր զրութեան և պաշտօնի հոգեւորականութիւնը պարտաւոր է լինել զրագէտ և իմանալ վարդապետութիւնը այն գաւանութեան, որոյ պաշտօնեացն է: Եղիպտոսի լուսաւորութիւնը նախ քուրմերի ձեռքին էր. Քարիլնինը և Ասորեստանինը՝ Քաղցեացւոց (քուրմեր) ձեռքին. Հըրէիցը՝ քահանայապետների և դպիլների ձեռքին. Հնդկացը և Զինացը՝ քուրմերի ձեռքին. Պարսիցը՝